

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**2023 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ը ՎՐԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Արայիկ Ստեփանյան

**2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Վրաստանի Հանրապետություն, ք. Թբիլիսի, 2023թ. նոյեմբերի 20-ից նոյեմբերի 24-ը

**3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Միջազգային էներգետիկ գործակալության (IEA)

**4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) կողմից իրականացվող EU4Energy ծրագրին շարունակական աջակցության և EU4Energy միջոցառումների ֆորումին

**5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

-Կայուն տրանսպորտի, ավտոմոբիլային տրանսպորտի էլեկտրիֆիկացման և ցածր ածխածնային վառելիքի ազգային և մոնիցինգային մակարդակի քաղաքականության գործիքների մշակում,

-Էկոլոգիապես մաքուր /կանաչ/ տրանսպորտի ներդրման Վրաստանի և Մոլդովայի մոնիցինգային փորձի ուսումնասիրություն,

-Էլեկտրական շարժիչով ավտոմոբիլների /էլեկտրոմոբիլներ/ ներկրմանն ուղղված միջոցառումների, պետական աջակցության, առավելագույնս քիչ էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ առավելագույն քանակի բեռներ և ուղևորներ տեղափոխելու օպտիմալ տարբերակների միջազգային փորձի ուսումնասիրություն,

-Բիովառելիքի արտադրությանն ուղղված միջոցառումների միջազգային փորձի ներկայացում, այցելություն Թբիլիսիի բիոդիզելի արդարության գործարան,

-Էկոլոգիապես մաքուր տրանսպորտի շրջանակում բենզինի կամ դիզելային վառելիքի փոխարեն սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազի օգտագործման Հայաստանի փորձի ներկայացում

**6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

-Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) փորձագետների կողմից ներկայացվեցին կայուն տրանսպորտի, ավտոմոբիլային տրանսպորտի էլեկտրիֆիկացման և ցածր ածխածնային վառելիքի ազգային և մոնիցինգային մակարդակի քաղաքականության հիմնական գործիքները, մասնավորապես՝ տրանսպորտի բնագավառում էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործումն ընդլայնելու, էլեկտրոմոբիլների ներկրումը խթանելու, էլեկտրոմոբիլների

ներկրման միջոցով ավտոպարկերի թարմացման և միաժամանակ՝ տրանսպորտ-կիրումետրային և ուղևոր-կիրումետրային չափորոշիչների բարելավմամբ էներգետիկ ռեսուրսների նվազագույն օգտագործմամբ առավելագույն քանակի բեռների և ուղևորների տեղափոխումն ապահովող միջոցառումների օպտիմալ տարբերակների մշակման հնարավորությունները:

-Քննարկվեցին տրանսպորտային վառելիքի սպառման, ցածր արտանետումներով այլընտրանքային վառելիքների (կենսավառելիքներ, էլեկտրոնային վառելիք) օգտագործման ընդլայնման միջոցով արտանետումների ինտենսիվության կարգավորման, Վառելիքային տնտեսության չափորոշիչների (բենզին, դիզել, CNG/LNG, էլեկտրական) և ճանապարհային տրանսպորտային միջոցների տեսակների (մոտոցիկլետներ, մեքենաներ, ավտոբուսներ, բեռնատարներ) ուժային միավորների օպտիմալ համադրման մեխանիզմների խնդիրները և մասնակից երկրների հնարավորությունները:

-ՄԷԳ փորձագետների կողմից ներկայացվեցին TBD – էլեկտրական մեքենաների առավելությունները էներգաարդյունավետության (ավելի ցածր սպասարկում և վառելիք ծախսեր), տեղական աղտոտիչների և CO2 արտանետումների կրճատման, նավթից կախվածության նվազեցման հնարավորությունները և էլեկտրաֆիկացման խթանման քաղաքականության կարևոր բաղադրիչները, մասնավորապես՝ ներմուծման տարբերակված մաքսատուրքերի և ԱԱՀ-ի կիրառումը: Կարևորվեց պետություն-մասնավոր հատվածի համագործակցության և կանաչ տրանսպորտի զարգացման գրավիչ նախագծերի ներկայացման և դոնոր կազմակերպությունների կողմից սույն նախագծերի ֆինանսավորման անհրաժեշտությունը:

- Ֆորումի ընթացքում Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) փորձագետների առաջարկությամբ մեր կողմից ներկայացվեց Հայաստանում տրանսպորտային պարկի ավելի քան 50 տոկոսը կազմող գազաբալոնային տրանսպորտային միջոցների նկատմամբ պետական վերահսկողական մեխանիզմների, օրենսդրական կարգավորումների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ:

## **7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ֆորումի ձևաչափը փաստաթղթի ստորագրման կամ որոշումների ընդունման միջոցառումներ չէր նախատեսում: Քննարկումների ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ էլեկտրոնային փոխգործելիության միջոցով էներգաարդյունավետ տրանսպորտային քաղաքականության ապահովման ուղղությամբ մշակվող փաստաթղթերի՝ Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) փորձագետներին ներկայացնելու, մասնագիտական խորհրդատվություն և փորձագիտական եզրակացություն ստանալու մասին: Միաժամանակ, Հայաստանի ներկայացուցիչների հետ առանձին քննարկման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ համապատասխան միջազգային գործընկերների հետ խորհրդակցության արդյունքում կտրամադրվի խորհրդատվություն առանց կատալիզատորների շահագործվող տրանսպորտային միջոցների նկատմամբ պետական քաղաքականության առավել մեղմ միջոցառումներ իրականացնելու միջոցով վտանգավոր արտանետումների նվազեցմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

Պայմանավորվածությունն է ձեռք բերվել նաև հետագա համագործակցության, իրավական ակտերի մշակման և կանաչ տրանսպորտի զարգացմանն ուղղված գրավիչ նախագծերի ֆինանսավորման համար դոնոր կազմակերպությունների ներգրավման մասին:

**8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) փորձագետների առաջարկությամբ ամրագրվեցին ՀՀ-ի կողմից ֆորումին մասնակից պետական բոլոր սուբյեկտների ներկայացուցիչների և ՄԷԳ փորձագետների էլեկտրոնային հասցեները և ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ հետագա աշխատանքները էլեկտրոնային նամակագրությամբ իրականացնելու վերաբերյալ:

Ըստ ոլորտային պատկանելության աշխատանքները կկազմակերպվեն ֆորումին մասնակից պետական ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ՝

Մունիցիպալ, մասնավորապես՝ Երևան քաղաքում իրականացվող միջոցառումները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի, տրանսպորտային համակարգի էլեկտրոարդյունավետության բարձրացման, կանաչ տրանսպորտ ինֆրաստրուկտուրաների զարգացման, միջազգային մայրուղիների համապատասխան կահավորման հարցերը՝ ՏԿԵ նախարարության, շրջակա միջավայրին վերաբերող հարցերը՝ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչներ հետ:

Աշխատանքների նման կազմակերպումը ապահովում է մշակվող նախագծերի միջազգային բարձրակարգ փորձաքննություն, միջազգային փորձի կիրառմամբ որակյալ խորհրդատվություն, իսկ արժեքավոր նախագծերի և արդիական տրանսպորտային ինֆրաստրուկտուրաների կայացման համար նախաձեռնություններին հնարավոր ֆինանսական աջակցություն ապահովելու համար հնարավոր դոնոր կազմակերպությունների ընտրություն:

**9. ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ**

27.11.2023թ.